



Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Երբ Աստուած ստեղծեց ամեն ինչ



Written by: Edward Hughes
Illustrated by: Byron Unger; Lazarus
Adapted by: Bob Davies; Tammy S.
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife
gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.
Produced by: Bible for Children
www.M1914.org


BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada

©2011 Bible for Children, Inc.
License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.

Ո՞վ մեզի ստեղծեց: Սուրբ Գիրքը, Աստուծոյ Խօսքը,
մեզի կը պատմէ թէ ինչպէս մարդը ծնունդ առաւ:
Երկար ժամանակ առաջ, Աստուած ստեղծեց
Ադամը աշխարհի հողէն ստեղծեց: Երբ
Աստուած կեանք փչեց
Ադամի մէջ, ան
կենդանացաւ:




Նախքան որ Ադամը ստեղծէ, Աստուած աշխարհը ստեղծեց եւ հրաշալի բաներով լեցուց գայն: Քայլ առ քայլ Աստուած ստեղծեց լեռները, դաշտերը, անուշաբոյր ծաղիկները, երկար ծառերը, բիրաւոր թռչունները եւ տգտգացող մեղունները, հզօր կէտ ձուկերը եւ կաչուն խիսունջները:



Իրականութեան մէջ
Աստուած ստեղծեց
ամէն ինչ:

3


Սկիզբը, նախքան որ Աստուած ստեղծագործութեան անցնի, բան մը գոյութիւն չունէր բացի Աստուծմէ, ոչ մարդիկ, ոչ տեղեր եւ ոչ ալ ուրիշ բաներ: Ոչ լոյս, ոչ մութ: Ոչ վեր, ոչ վար, ոչ երեկ եւ ոչ ալ վաղը: Միայն Աստուած կար, որ սկիզբ չունէր: Սակայն յանկարծ Աստուած գործի անցաւ:



Սկիզբը, Աստուած
ստեղծեց երկինքը եւ
երկիրները:


4

Աշխարհը պարապ էր
եւ ձեւ մը չունէր:
Եւ մթութիւնը
ամէն տեղ
ծածկած
էր: Յետոյ
Աստուած
խօսեցաւ:
"Թող
որ լոյս
ըլլայ":




5

Եւ լոյսը եղաւ: Աստուած այս լոյսը կոչեց ցերեկ եւ մութը կոչեց գիշեր: Եւ առտուն եւ իրիկունը եղան առաջին օրը:




6

Երկրորդ օրը, Աստուած ստեղծեց ովկիանոսներուն ջուրերը, ծովերը եւ լիճերը երկինքին տակ: Երրորդ օրը, Աստուած ըսաւ, "Թող որ ցամաքը դուրս գայ": Եւ այդպէս եղաւ:




7

Նոյնպէս Աստուած հրամայեց խոտին, ծաղիկներուն, թուփերուն եւ ծառերուն, որպէսզի երեւին: Եւ անոնք երեւցան: Եւ գիշերը ու ցերեկը եղան երրորդ օրը:




8

Ետքը Աստուած ստեղծեց արեւը,
յետոյ լուսինը եւ զանազան
աստղեր, որ անթիւ եւ
անհամար են: Եւ գիշերը
ու ցերեկը եղան չորրորդ օրը:



9


Ծովու կենդանիները եւ
ձուկերը ու թռչունները
յաջորդն էին Աստուծոյ
ծրագրին մէջ: Հինգերորդ
օրը Ան ստեղծեց հսկայ
սողացածուկ եւ մանր
ձուկեր, երկար ոտքերով
թռչնազգիներ եւ փոքր
թռչուններ: Աստուած
ստեղծեց ձուկերը, որ
լեցնեն որ վայելեն
երկինքը, ծովերը եւ
ցամաքը: Եւ գիշերը
ու ցերեկը եղան
հինգերորդ օրը:



10

Այդկէ ետք, Աստուած անգամ մը եւս խօսեցաւ: Ան
ըսաւ. "Թող որ հողը առաջ բերէ ապրող էակներ...":

Ամեն տեսակի անասուն, միջատ եւ սողուն
գոյութեան եկան: Կային հսկայ փիղեր եւ աշխուժ
սկոյրներ: Կապիկներ եւ կոկորդիլոսներ: Որդիներ
եւ դաշտամուկեր: Ընձուղտներ եւ կատուներ: Ամեն
տեսակի անասուն այդ օրը ստեղծուեցաւ Աստուծոյ
հրամանով: Եւ գիշերը ու ցերեկը եղան
վեցերորդ օրը:



11


Վեցերորդ օրը Աստուած շատ հրաշալի բան
մըն ալ ըրաւ: Հիմա ամեն ինչ պատրաստ էր
մարդուն համար: Լեցուն ուտելիք կար եւ լեցուն
անասուններ, որ գիւք ծառայեն: Եւ Աստուած



ըսաւ. "Թող որ մարդը
ստեղծուի մեր պատկերով, եւ
թող որ ըլլայ Տէր աշխարհի
վրայ": Եւ այս ձեւով
Աստուած ստեղծեց
մարդը իր պատկերով:
Աստուծոյ պատկերով
Ան գիւք
ստեղծեց...

12

Աստուած խօսեցաւ
Ադամի հետ: "Կեր
ինչ որ կը ցանկաս
այս պարտեզէն:
Սակայն բարիի եւ
յարի գիտութեան
ծառէն չուտես: Եթէ
ուտես այդ ծառէն
վստահ որ պիտի
մեռնիս":



13

Եւ Տէր Աստուած ըսաւ. "Լաւ
է՛, որ մարդը առանձին մնայ:
Եւ անոր օգնական մը պիտի
ստեղծեմ": Աստուած Ադամի
առջեւ բերաւ ամեն
զազաններն ու
թռչունները:



14

Ադամ ամենուն անուն մը տուաւ: Ան շատ խելացի պէտք է, որ ըլլայ որ այդ գործը ամբողջացնէ: Սակայն ամբողջ այդ անասուններուն եւ գազաններուն մէջ որբէ կողակից չկար Ադամի:



15

Աստուած Ադամը խորունկ, շատ խորունկ քունի մը անցուց: Ան Ադամի կողէն ոսկոր մը առաւ եւ Աստուած կինը ստեղծեց Ադամի կողի ոսկորէն: Կինը, որ Աստուած ստեղծեց Ադամի լաւագոյն կողակիցը պիտի ըլլար:



16

Աստուած ամէն ինչ վեց օրուայ մէջ ստեղծեց: Յետոյ Աստուած օրհնեց եօթներորդ օրը եւ հանգստեան օր հռչակեց: Եղեմի Պարտեզին մէջ, Ադամ եւ Եւա, իր կինը հրաշալի կեանք մը կ'ապրէին Աստուծոյ հնազանդելով: Աստուած անոնց Տէրն էր, իրենց հայրապետը եւ իրենց ընկերը:



17


Երբ Աստուած ստեղծեց ամէն ինչ Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը, Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ծանոց 1 - 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

18



1



60

19

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեզ կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

20